ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԳՄՆ
Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Կատարող՝ Գայանե Համլետի Մեսրոպյան
Մեղրաշատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ դասվար

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

Գյումրի 2023

# Բովանդակություն

1. Ներածություն- էջ 3
2. Ներառական կրթությունը Հայաստանում – էջ 4-5
3. Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը –էջ 6
4. Ներառական կրթության մարտահրավերները – էջ 6-7
5. Ներառական կրթության իրականացման խնդիրները –էջ 9-13
6. Ներառական կրթությունը ՀՀ-ում – էջ 13-14
7. Եզրակացություն – էջ 15
8. Գրականության ցանկ – էջ 16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ի՞նչ ասել է ներառական կրթություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

**Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները**

Ներառական կրթությունը Հայաստանում

---

**Իրավական հիմքեր և առկա վիճակը**

# Ներառական կրթության անհրաժեշտությունը

## Ներառական կրթությունը կրթություն է բոլորի համար

Երբ կրթությունը ներառական է, ապադրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը եւ հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաեւ հաշմանդամություն եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային եւ համայնքային կյանքին, նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն եւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ եւ չքավոր երեխաներ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետեւանքով որբացած երեխաներ եւ այլն:

**Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում**

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան եւ ֆիզիկական զարգացման կարիքներին եւ անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլել ու կամ միատեսակ դարձնել ու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկությունների, անհատական կրթական պահանջմունքների, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախվկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն << հատուկ հմտություններ>>: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար:

Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

## Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարեւանությամբ ապրել ու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները եւ քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները եւս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձեւավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, եւ կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

## Ներառական կրթության մարտահրավերները

Ներառական կրթության համակարգի զարգացում

Բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն

Հավասար հնարավորությունների ստեղծում

Անհատական մոտեցումներ

. Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին եւ կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միեւնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:

. Որոշիչ է այն հարցը, ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նաստանաիր կարողություններին եւ կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապադաարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

. Մարդիկ տարբեր են, դաբնական է եւ ցանկացած հաարակություն դարձնում է ավելի հարուստ եւ հետեւաբար պետք է իր արտացոլումը գտնի նաեւ դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ եւ, իհարկե, անհատական մոտեցում:

. Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան եւ ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

. Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ եւ գիտակից աշխատեն ներառական կրթության նպատակներին հասնելու համար:

# Ներառական որակյալ կրթություն

# Համագործակցություն, հավասարություն եւ մասնակցություն

## **Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում**

- Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝

կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերացնելու հարցում:

- Կարևորն այն է, որ փոփոխությունը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծել այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնել յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:
- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների համակցումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ: Դրանք պատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավել ևս կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է:

**Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին**

Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորել հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության տակ է:

- Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Հատուկ դպրոցները չեն կարող այս հարցի լուծում հանդիսանալ: Շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում: Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ լինել, դրանք պետք է շատ ակտիվ դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն մատուցող ծառայությունների կենտրոններ:
- Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահոված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:

- Հատուկ և հանրակրթական դպրոցների միջև առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարևոր դերը բոլոր երեխաներին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու նպատակով: Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:
- Աշակերտի և նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կկրի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Ռեսուրս-ուսուցիչների առկայությունը չի ենթադրի, որ նրանք կարող են ստանձնել այդ պարտականությունը հանրակրթական դպրոցի ուսուցչի փոխարեն:
- Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու կլինի, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան և գնահատվեն: Նման ծրագրերի և դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ և ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ կառաջարկեն մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարևոր մաս կկազմի դասավանդման որակը բարելավելու գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի այն պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
- Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, և շատ կարևոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի դրական զարգացումները բացահայտելուն:

## Բաց և ճկուն ուսումնական ծրագրերը կարևոր են դպրոցների զարգացման համար

Շատ կարևոր է, որ ուսումնական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն, և ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու, լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը:

- Հանրահայտ ճշմարտություն է, որ մարդիկ տարբեր են, սակայն դա միշտ անտեսվում է ուսումնական ծրագիր կազմելիս, երբ ենթադրվում է, որ բոլոր երեխաները պետք է կարողանան նույն բանը սովորել, նույն գործիքներով ու նույն մեթոդներով: Բոլոր երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող և օժտված երեխաների համար շատ կարևոր է, որ ուսումնական ծրագիրը հստակ նպատակներ սահմանի նրանց կրթության համար, իսկ

ուսուցիչներն ազատ լինեն ընտրել այն ուղիներն ու մեթոդները, որով նրանք կապահովեն այդ նպատակներին հասնելը:

- Դպրոցներին պետք է աջակցություն ցուցաբերվի որոշակի առարկաների կամ ուսուցման մեթոդների փոփոխության հարցում և այդ աջակցությունը պետք է զուգորդվի համապատասխան հմտությունների զարգացման հետ: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի այդ կարիքների բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովմանը:

## ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներառական կրթություն. Պատկերացումներ և իրականություն

Պատկերացումը ներառական կրթության մասին, իդեալական մոդելը:
Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում` նաև ԿԱՊԿՈՒ և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Ներառական կրթությունը հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պատասխանատվությունն է: Ներառական կրթության հիմքում ընկած գաղափարախոսությունը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում է հատուկ պայմաններ հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար: Այսպիսով, ներառական կրթությունը`
Ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել ,
Ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները
Նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:
Ենթադրում է դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և համապատասխանեցում աշակերտների առանձնահատկություններին:
Ենթադրում է ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումների աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում:
Խտրականության դեմ պայքարի լավագույն միջոց է :

Ուղղված է փոխել ու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության հանդեպ:
ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպումը հիմնվում է հետևյալ ելակետային դրույթների վրա`
ԿԱՊԿՈՒ երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման
Իրավունք ունեն օգտվել ու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից` անկախ իրենց ընտրած ուսումնական հաստատությունից
Երեխայի համակողմանի, բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրանց մեկուսացման:
Ներառական կրթությունը, որպես կրթական նոր մոտեցում, ենթադրում է, որ

առաջընթացն ավելի հավանական կլինի, եթե մենք ընդունենք, որ երեխաների դժվարությունները դպրոցների կազմակերպման ձևերի և ուսումնական մեթոդների ոչ ճկուն լինելու հետևանք են: Ենթադրում է նաև, որ անհատական տարբերությունները
ոչ թե լուծման ենթակա պրոբլեմներ են, այլ ուսումնական գործընթացը հարստացնող հնարավորություններ:
ԸստԿԱՊԿՈՒ երեխաների կրթության մասին ՀՀօրենքի (ընդունված 2005թ. Մայիսի 25) ներառական կրթությունը կարող է կազմակերպվել այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով:

Ինչքան էլ ներառական կրթությունը հիանալի գաղափարախոսություն է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, սակայն մեր հանրապետությունում այն իրականացվում է մի շարք բացթողումներով: Թեև ներկայումս ՀՀ-ում մի շարք դպրոցներ իրականացնում է ներառական կրթություն, այդուհանդերձ ոչ մի դպրոցում այն լիարժեք չի համապատասխանում ներառական կրթության այն նկարագրությանը, որն առկա է տեսականորեն: Այդ բացն առկա է ներառական կրթության իրականացման համար պատասխանատու բոլոր օղակներում: Երեք տարվա աշխատանքային փորձը ներառական կրթություն իրականացնող տարբեր դպրոցներում, քննարկումները և զրույցները մանկավարժների հետ ու նրանց դժգոհությունները կրթական գործընթացից, թույլ են տալիս առանձնացնել հետևյալ հիմնական պրոբլեմները, որոնք առկա են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում՝
1. Շենքային պայմաններ: Անգամ առաջին ներառական դպրոցներում, որոնք արդեն 10 տարուց ավելի է, ինչ ներառական կրթություն են իրականացնում, դեռևս շենքային պայմանները հարմարեցված չեն երեխաների առանձնահատկություններին, դպրոցներում բացակայում են դասապրոցեսը ավելի հասկանալի և հասանելի դարձնող պարագաները: Չկան նաև հարմարեցված սանհանգույցներ, ինչի արդյունքում ներառված երեխաները ստիպված են օգտվել մանկավարժների համար նախատեսված սանհանգույցից, ինչն էլ դժգոհություն է առաջացնում նրանց մոտ:
2. Աշակերտների քանակը: Աշակերտների քանակը դասարաններում շատ է, 4-5 ներառված երեխա առաջին դասարանում, որոնց մոտ առկա է ադապտացիայի խնդիր, և հատկապես առաջին դասարանում լուրջ խոչընդոտներ են առաջանում դասապրոցեսը կազմակերպելու, մյուս աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու ուղղությամբ:
3.ուղեկցող մասնագետներ: Միայն ուսուցչուհին չի հասցնում աշխատել և դասարանի և ներառված աշակերտների հետ,ուստի անհրաժեշտություն է առաջանում ուղեկցող-օգնական մասնագետների առկայության դասարանում, կամ երեխաների հետ դասին մասնակցում է ծնողը: Սակայն խոչընդոտում է նորմալ դասապրոցեսի իրականացմանը,քանի որ դասարանում աշխատող մի քանի մասնագետները, ինչքան էլ փորձեն ցածրաձայն աշխատել ,միևնույն է ,աղմուկ է առաջանում:
Բացի այդ, այլ մասնագետի առկայությունը դասարանում արդեն իսկ առանձնացնում է ներառված երեխային հասակակիցներից:
4.ներառվող երեխայի մտավոր զարգացման մակարդակը: Ներառումը համընդհանուր գործընթաց է, ինչի արդյունքում դպրոցներում հայտնվում են զարգացման տարբեր աստիճանի խանգարումներով երեխաներ: Կարելի է նկատել մտավոր ծանր խանգարումներով երեխաներ, ովքեր ներառական դպրոցում ապահովում են միայն ֆիզիկական ներկայություն: Բնականաբար, նրանք ծրագիրը չեն հասցնում և

պահանջում են անհատական մոտեցում: Եթե անգամ նրանք դասարանում լինում են այլ մասնագետների ուղեկցությամբ, միևնույնն է նրանց հետ տարվում է այլ աշխատանք, և արդյունքում ստացվում է անհատական պարապմունք դասարանում, և ոչ թե ներառում:
Անվտանգության ապահովում: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում լուրջ խնդիր են ներկայացնում վարքային խանգարումներով երեխաները, հատկապես ագրեսիվ վարքով, ովքեր առանց ուղեկցող անձի, կարող են վտանգ ներկայացնել իրենց դասընկերների և մանկավարժների համար:
5.ինքնասպասարկման հմտություններ:Հաճախ կարելի է դպրոցներում տեսնել այնպիսի երեխաների, ում մոտ զարգացած չեն ինքնասպասարկման հմտությունները: Նրանք կարիք ունեն մասնագետների կամ ծնողի մշտական ուղեկցության, ովքեր կհոգան նրանց ֆիզիոլոգիական պահանջմունքները:
6.Ծնողների անադեկվատ պահանջներ: Հաճախ հանդիպող խնդիրներից է ներառված երեխաների ծնողների անադեկվատ պահանջները երեխաներին և մասնագետներին: Ծնողները շատ դեպքերում երեխաներից պահանջում են ավելի, քան նրանց հնարավորություններն են: Նրանք իրենց երեխային տեսնելով նորմալ զարգացում ունեցող հասակակիցների կողքին, ենթադրում են, որ նա էլ պետք է հասցնի յուրացնել նույնքան, որքան իր դասընկերները: Եվ արդյունքում ավելի է ընդգծվում ԿԱՊԿՈՒ երեխայի տարբերությունն իր դասընկերներից: Հաճախ նաև ծնողները նկատում են իրենց երեխաների փոքրիկ հաջողությունները, բայց դրա համար պնդում են գերազանց գնահատական, որը սակայն գնահատման ընդհանուր չափանիշներով գերազանցիչ է: Իսկ գնահատման առանձին համակարգի առկայությունը ևս առանձնացնում է ներառված երեխաներին և հակասում ներառման գաղափարախոսությանը:
Սոցիումի անհանդուրժողականություն: Մեր սոցիումն առայսօր պատրաստ չէ զարգացման տարբեր առանձնահատկություններով անձանց ընդունել իրենց հավասար լիարժեք անձ: Մանկավարժները նշում են, որ շատերը, անցնելով ներառական կրթություն իրականացնող դպրոցի կողքով, այն անվանել են «դեբիլների դպրոց» և պարզ է, որ նման իրավիճակում չի կարող խոսք լինել ներառման մասին: Սրա պատճառն այն է, որ ներառական կրթությունը ՀՀ-ում սկսեց իրագործվել «միանգամից», ինչին պատրաստ էին, ոչ մանկավարժները, ոչ աշակերտները և ոչ էլ սոցիումն առհասարակ:
7.ԲՄԹ-ի ոչ կոմպետենտություն: Որքան էլ զարմանալի թվա, բայց որոշ ներառական դպրոցներում ԲՄԹ-ի անդամները իրենց աշխատանքի հարցում բավականաչափ կոմպետենտ չեն, և հաճախ մասնագիտական պարապմունքները վերածվում են ուղղակի ժամանցի:
Աշխատանքային և հետազոտական գործունեության ընթացքում աչքի զարնվեցին նաև մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրացիային նորմալ զարգացում ունեցող հասակակիցների միջավայր և առանձնացնում են նրանց հասակիցներից:
8.Ուղեկցող մասնագետի կամ ծնողի ներկայությունը դասին և դասամիջոցին: Հատկապես տարրական դասարաններում հաճախ են դասընկերները հարցնում, թե ինչու իրենց դասընկերը մենակ չի նստում, ինչու նա օգնող ունի: Իսկ արդեն դեռահասության տարիքում այն ներառված երեխաները, ում ինտելեկտը պահպանված է, սկսում են իրենք հետաքրքրվել, թե ինչու իրենց կողքին մշտապես մեկն առկա է, իսկ դասընկերները նստում են մենակ: Նման իրավիճակ ստեղծվեց աուտիզմով երեխայի մոտ, ում հետ աշխատել եմ 3-րդ և 4-րդ դասարաններում, և հանկարծ 4-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսվեցին վարքային լուրջ փոփոխություններ, ագրեսիվ հակազդում իմ ներկայությանը և հանգիստ վարքագիծ իմ բացակայության ժամանակ: Աշխատանք տարվեց նրա ինքնուրույնության ուղղությամբ և նա սովորեց դասերին մասնակցել առանց

ուղեկցող-մասնագետի:
9.Ներառված երեխաների հաճախումները 2-3 դասաժամից և շուտ տուն գնալը:
Հաճախ կարելի է հանդիպել աշակերտների դժգոհության, թե ինչու իրենց դասընկերը կարող է ուշացած գալ և չստանալ նկատողություն, իսկ իրենք մշտապես պատժվում են ուշանալու համար: Միջին և բարձր դասարաններում էլ դասընկերները այս իրավիճակին այլ մեկնաբանություն են տալիս՝ հիվանդ է, ոչինչ թող ուշ գա:
10.Արտոնություններ ներառված երեխաներին (դասի ժամանակ կարող են վեր կենալ, քայլել, դուրս գալ դասարանից, զբաղվել այլ բաներով), ինչն արդեն ենթադրում է տարբեր պահանջներ և պայմաններ ներառված երեխաների համար, որը ևս հանգեցնում է հասակիցների դժգոհությանը: Եվ ստացվում է այնպես, որ ներառված երեխան միևնույնն է չի ենթարկվում համընդհանուր մշակված նորմերին և կանոններին:
11.Ներառված երեխաներին անվճար սնունդ տրամադրելը: Սա ևս նրանց առանձնացնում է հասակակիցներից: Ստացվում է այնպես, որ ներառված երեխաները քաղց են զգում, իսկ նորմալ զարգացում ունեցող հասակակիցները ո՞չ:
Ֆիզիկական տարբերությունները, որոնք սակայն մեկուսացման պատճառ չեն կարող լինել մյուսների բացակայության ժամանակ:
Առաջարկներ ներառական կրթության բարելավման ուղղությամբ՝
շենքային և դասարանական պայմանների հարմարեցում: Սա, կարծում եմ առաջին պայմանն է, որը շատ կարևոր է զարգացման խանգարումներով երեխաներ դպրոցում գտնվելու համար: Սանհանգույցների, դասասեղանների, դասարանների հարմարեցում, անհրաժեշտ պարագաներով հագեցվածություն, բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական ծրագերի կազմակերպումն ու իրականացումը:
Ներառված աշակերտների թվի հարաբերական սահմանափակում: Ցանկալի է դասարանում ներառված լինեն 2-3 զարգացման առանձնահատկություններով երեխաներ: Հարաբերական սահմանափակումը կախված է երեխայի մոտ խնդիրի ծանրության աստիճանից: Եթե այնպիսի երեխաներ են, ովքեր ունեն պահպանված ինտելեկտ, որոշակի ինքնավերահսկողություն, ինքնասպասարկում, չունեն լուրջ վարքային խանգարումներ, կարող են լինել նաև մինչև 4-5 երեխա: Այս դեպքում անգամ առանց ուղեկցող- մասնագետի մանկավարժը կհասցնի ժամանակ տրամադրել և դասի մեջ ներգրավել նաև ներառված երեխաներին:
Զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ներառման որոշ չափանիշների մշակում: Ներառական դպրոցներ ընդունելիս լավ կլիներ պարզել երեխայի ինտելեկտուալ զարգացման մակարդակը: Արդյո՞ք նա ի վիճակի է հաղթահարել կրթական ծրագրով նախատեսվածի գոնե նվազագույնը: Ծանր մտավոր հետամնացությամբ երեխաները ներառական դպրոցում կարելի է ասել ապահովում են միայն ֆիզիկական ներկայություն, մինչդեռ, եթե նրանք գտնվեին հատուկ դպրոցում կուսուցանվեին իրենց համար և իրենց մտավոր զարգացմանը համապատասխան ծրագրով, ինչը, կարծում եմ, առավել արդյունավետ կլիներ նրանց համար: Ի վերջո ավելի լավ է դանդաղ զարգացումը, քան տեղում մնալը: Հատուկ դպրոցում նրանք նաև չէին տարբերվի իրենց հասակակիցներից և չեն ենթարկվի ծաղրի: Սակայն պետք է նշել նաև, որ հակառակ երևույթն էլ է հաճախ տեղի ունենում, երբ հատուկ դպրոցներում հայտնվում են այնպիսի աշակերտներ, ովքեր ներառական դպրոցներում մեծ առաջընթաց կունենային:
Նախապատրաստական անհատական աշխատանք վարքային խանգարումների դեպքում: Վարքային խանգարումներով անձանց կարելի է ներառել միայն համոզված լինելու դեպքում, որ նրանք անվտանգ են շրջապատողների համար:
ԲՄԹ-ում ներգրավված լինեն միայն համապատասխան կրթություն և որակավորում

ունեցող մասնագետներ, ովքեր պարբերաբար վերապատրաստվում են, քանի որ հատուկ կրթության ոլորտը անընդհատ փոփոխվող և զարգացող ոլորտ է:
Այդուհանդերձ, մեր հանրապետությունում բուռն կերպով առաջ է ընթանում ներառական գաղափարախոսությունը, ավելանում է ներառական կրթություն իրականացնող դպրոցների քանակը, անընդհատ ուսաքանվում է ներառական կրթության մասին, ձեռնարկվում են հոգեկան, ֆիզիկական և մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին հասարակության մեջ ներգրավել ու ուղղությամբ: Բայց, ցավոք, այդ ամենն իրականացվում է տեսականորեն, իսկ պրակտիկ դաշտում դեռևս առկաեն մի շարք բացթողումներ:

## Ներառական կրթությունը Հայաստանում

---

Այսօր աշխարհում կան մտավոր եւ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդիկ: Նրանք հաճախդժվարություններ են կրում ֆիզիկական եւ սոցիալական արգելքներում, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից եւ հնարավորություն չեն տալիս ակտիվորեն մասնակցել իրենց երկրի զարգացմանը: Այս խնդրի լուծման բանալին մարդկանց մտածելակերպի մեջ է. Անհրաժեշտ է կրթել եւ իրազեկել հասարակությանը, ճանաչել բոլոր մարդկանց իրավունքները եւ սերմանել հարգանք նրանց նկատմամբ: Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր, այդ թվում՝ հատուկ կրթության կարիք եւ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի
վրա: Ներառումը այսօրվաըմբռնմամբ ծագում է հատուկ կրթությունից, որի զարգացումն անցել է մի քանի փուլեր: Դրանց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդա-
մություն ունեցող երեխաների եւ սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ:
Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, այլ դեպքերում էլ իրականացվել է առանձին: Սակայն, վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգի
նպատակահարմարությունը:Ներառական կրթության իրագործմանն ուղղված ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա: Այն սահմանում է,բոլոր երեխաները կարող են սովորել :Ներառական կրթությունը ստիպում է կրթական կառույցներին,համակարգերին եւ մեթոդաբանություններին կազմակերպել հատուկ կրթական գործընթաց եւ այն իրականացնել բոլոր երեխաների կարիքներին համապատասխան:Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար անհրաժեշտ են հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է ընդամենը որակյալ, հասկանալի եւ մատչելի դասավանդում, որը նպաստում է աշակերտների ակտիվացմանը:Ներառական կրթությունը գործում է շատ երկրներում: Այդ գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները, այդ թվում՝ կրթական գործընթացից դուրս մնացած եւ ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը: Առաջին խնդիրը վերաբերում է մասնագիտական, այդ թվում մանկավարժական կադրերի պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը: Մասնագետները

կարիք ունեն ոչ միայն
տեսական, այլ եւ գործնական բնույթ կրող վերապատրաստումների, ինչպես նաեւ օժանդակող գիտամեթոդական գրականության: Դպրոցներում գրեթե չկան կամ շատ քիչ են աշխատանքային գործիքները՝ հատուկ աշխատանքային տետրեր, մեթոդական գրականություն, երեխայի ընտանիքի կարիքների գնահատման եւ վարման համար անհրաժեշտ փաստաթղթեր: Մանկավարժների ձեռքի տակ չկան թեթեւ, միջին ու ծանր աստիճանի մտավոր հետամնաց երեխաների համար նախատեսված չափորոշիչներ եւ ծրագրեր: Ըստ Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացության՝ մանկավարժները պետք է աշխատեն նշված չափորոշիչների հիման վրա կազմված անհատական ուսումնական պլաններով: Հաջորդ խնդիրը վերաբերում է դասասենյակների կահավորմանը: Դասասենյակները հիմնականում կահավորված են ավանդական ձեւերով, իսկ նստարանների այդ տիպի դասավորությունը հաճախ չի նպաստում, նաեւ խոչընդոտում է
ԿԱՊԿՈՒ (Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունե-
ցող) երեխաների՝ դասապրոցեսում ակտիվ ներգրավմանը: Բացի այդ, դասասենյակները
համալրված չեն դիդակտիկ նյութերով, զարգացնող խաղերով, որոնց անհրաժեշտությունը մեծ է դպրոցում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության արդյունավետ կազմա-
կերպման համար: Անդրադառնալով բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն-դպրոց համագործակցությանը՝ ցանկանում ենք նշել, որ այս դաշտում եւս առկա են մի շարք խնդիրներ, որոնք իրենց բացասական անդրադարձն են ունենում ներառական կրթության որակի վրա: Դիտումներն ու հարցազրույցները ցույց են տվել, որ հաճախ առաջանում են հակասություններ կապված այս կամ այն ԿԱՊԿՈՒ երեխայի կրթական կարիքի գնահատման հետ, ինչը չի ստանում հստակ լուծում: Չնայած այս բոլոր խնդիրներին՝ Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթությունն ունի լուրջ ձեռք-
բերումներ, եւ նշված թերությունների վերացումը կնպաստի դրա որակի եւ արդյունավետության առավել բարձրացմանը:

## Եզրակացություն

Այսպիսով, ներառական կրթությունը ենթադրում է աջակից կառույցների եւ ռեսուրսների ստեղծում ուսուցիչների, աջակերմների, ծնողների եւ ներառական կրթության համակարգի այլ շահառուների համար: Ներառական կրթությունը օգնում է հաղթահարել խտրականությունը:
Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Դրա պատճառներն են տեղեկատվության բացակայությունը, հաշմանդամություն ունեցող անձանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարեւանության մբ ապրել ու փորձի բացակայությունը կամ պակասը: Այս պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Երեխաները ապագածնողներ են,
ուսուցիչներ, փաստաբաններ եւ քաղաքական գործիչներ: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները կրթություն ստանան առողջ երեխաների հետ, ապա բոլորի մեջ կձեւավորվի սովորական վերաբերմունք եւ հարգանք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, եւ կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ նույնպես հասարակության լիիրավ անդամներ են: Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ եւ գիտակից աշխատեն ներառական կրթության նպատակներին հասնելու համար: Ներառական որակյալ կրթության գրավականը համագործակցությունը, հավասարությունն ու դրանում մասնակցությունն է: Ներառական կրթությունը ՀՀ-ում իրականացվում է մոտ 15 տարի: Այս տարիների ընթացքում մեծացել է ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը, որոնք ժամանակի ընթացքում զարգացնում են ներառական կրթությունը եւ բարձրացնում դրա որակը: Այս համակարգում դեռեւս առկա են բացթողումներ եւ խնդիրներ, որոնք ընդհանուր առմամբ անդրադառնում են ներառական կրթության որակի վրա, եւ այն երբեմն կրում է ձեւական բնույթ:

# Գրականության ցանկ


1. Անափիոսյան Ա., Հայրապետյան Գ. եւ Հովսեփյան Ս. Հայաստանի ներառական կրթության մոտեցումը միջազգային չափորոշիչների եւ գործելակերպերի, Երեւան:
2. Ներառական կրթությունը գործնականում: Ուսումնամեթոդական ձեռնարկ:
3. Այվազյան Ա., Գրիգորյան Ա., Թադեւոսյան Է. եւ այլք, Լոգոպեդիան գործնականում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երեւան 2017:
4. Թադեւոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման, մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երեւան, 2016:
5. Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: 2019
6. Բաթոյան Զ. Ներառական հանդիպումների կազմակերպման ուղեցույց